# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 14 հունվարի 2026թ-ին կնքված N «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/6-2» ծածկագրով՝ Պետության կարիքների համար տեսաֆիլմերի արտադրության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք.Երևան «   » 2026թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վահան Ազիբեկյան Հակոբի» ԱՁ-ն, ի դեմս Վահան Ազիբեկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետը, ինչպես նաև «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/6-2» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2026 թվականի համար հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ հավելված 1-ի և Վճարման ժամանակացույցի՝ հավելված 2-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2026թ-ի հունվարի 15-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

### *2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագիրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «Վահան Ազիբեկյան Հակոբի» ԱՁ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 1 | Լոռի, Վանաձոր, Համբարձումյան փ. 3/22 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Ինեկոբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011030948 | ՀՀ 2052132348391001 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 67173324 |
| | Ստորագրող ՎԱՀԱՆ ԱԶԻԲԵԿՅԱՆ 2702910238 2026-02-02 15:00:11 GMT+04:00 Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից |
| -------------------------------- | -------------------------------- |
| / ստորագրություն / Կ.Տ | / ստորագրություն / Կ.Տ |

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2026.02.02 17:25:24 AMT

*Հավելված թիվ 1*
*«14» հունվարի 2026թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/6-2 ծածկագրով պայմանագրի*
*«  » 2026թ. կնքված N 1 Համաձայնագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 2 | 92111100/501 | **2.Կինո և տեսաֆիլմերի արտադրության ծառայություններ՝ այդ թվում.**<br>**Ռիլային (Reels) տեսանյութերի պատրաստում Կատարողը պարտավոր է տրամադրել Պատվիրատուին 60 ռիլ (reels) տեսանյութեր:**<br>Ռիլային տեսանյութերի տևողությունը՝ յուրաքանչյուրն առնվազն 1 րոպե 30 վայրկյան, առավելագույնը 2 րոպե 30 վայրկյան, չափը՝ 1 080 x 1 920 px՝ ինստագրամյան հարթակի բոլոր պահանջներին համապատասխանող:<br>Տեսանյութերը պետք է նկարահանվեն հատուկ տեսախցիկի կամ iOS կամ Android վերջին սերնդի թողարկումներով: Տեսանյութերը կարող են պարունակել բացօթյա և փակօթյա նկարահանումներ Երևանում և Հայաստանի մարզերում, դրոնից կադրեր, տեքստեր, ֆիլտրեր, AI լուծումներ, տարբեր էֆեկտներ, ստեղծագործական լուծումներ, մոնտաժ, հեղինակային իրավունքի պահպանմամբ երաժշտություններ: Բոլոր նկարահանումները պետք է պահպանեն պրոֆեսիոնալ նկարահանման պահանջները, կադրերը պետք է լինեն բարձր որակի, ըստ անհրաժեշտության պետք է օգտագործվեն հատուկ ոտնակներ, ամրակներ՝ ստատիկ կամ շարժուն կադրերի համար:<br>Տեսանյութերը պետք է պատրաստվեն նախապես մշակված սցենարով և նկարահանվեն փորձառու reelmaker-ի կողմից: Reelmaker-ը պետք է ունենա առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ և մասնագիտական պորտֆոլիո՝ առնվազն 40 հրապարակված ռիլներով: | դրամ | 6 140 000 | 1 | ք.Երևան, Վ.Սարգսյան 3 Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ | 2026թ. հունվարի 15-ից դեկտեմբերի 25-ը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Յուրաքանչյուր տեսանյութի պատրաստման ժամկետը՝ առավելագույնը 4 օր: Նախնական տարբերակները դիտելուց հետո Պատվիրատուն կարող է առավելագույնը 5 անգամ հանդես գալ առաջարկներով, ինչպես նաև պահանջել վերանկարահանումներ:<br>Կատարողը պարտավոր է Պատվիրատուին տրամադրել առնվազն մեկ կոնտակտային անձ աշխատանքների իրականացման ընթացքում Պատվիրատուի կոնտակտային անձի հետ գրավոր և բանավոր հաղորդակցության համար:<br>Վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ ըստ թմբուկ/ռելային (reels) տեսանյութերի քանակի: | | | | | |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011030948
ՀՎՀՀ 02505554

---------------------------------
/ ստորագրություն / Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Վահան Ազիբեկյան Հակոբի» ԱՁ
Լոռի, Վանաձոր, Համբարձումյան փ․ 3/22
Ինեկոբանկ ՓԲԸ
ՀՀ 2052132348391001
ՀՎՀՀ 67173324

Ստորագրող
ՎԱՀԱՆ ԱԶԻԲԵԿՅԱՆ
2702910238
2026-02-02 15:02:05 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

---------------------------------
/ ստորագրություն / Կ.Տ

Digitally signed by BOSHYAN GARIK
1404880475
Date: 2026.02.02 17:25:53 AMT

*Հավելված թիվ 2*
*«14» հունվարի 2026թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/6-2 ծածկագրով պայմանագրի*
*«            »                        2026թ. կնքված N 1 Համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 92111100/501 | Կինո և տեսաֆիլմերի արտադրության ծառայություններ | - | 859600 | 859600 | 2271800 | 2271800 | 2271800 | 3929600 | 3929600 | 3929600 | 6140000 | 6140000 | 6140000 | 6140000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011030948
ՀՎՀՀ 02505554

--------------------------------
/ ստորագրություն / Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Վահան Ազիբեկյան Հակոբի» ԱՁ
Լոռի, Վանաձոր, Համբարձումյան փ. 3/22
Ինեկոբանկ ՓԲԸ
ՀՀ 2052132348391001
ՀՎՀՀ 67173324
Ստորագրող
ՎԱՀԱՆ ԱԶԻԲԵԿՅԱՆ
2702910238
2026-02-02 15:03:24 GMT+04:00
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
/ ստորագրություն /     Կ.Տ

Digitally signed by BOSHYAN GARIK
1404880475
Date: 2026.02.02 17:26:18 AMT